ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«02» օգոստոս 2019թ.
No /18-2/43884-2019

«ԴԱՎԻԹ ՔՈՉԱՐՅԱՆ» ԱՁ-Ի ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ
Ք.ԵՐԵՎԱՆ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ-4
ՀԵՌ.՝ 091 43-04-95, ԷԼ. ՀԱՍՑԵ՝ DATL18@RAMBLER.RU

Հարգելի պարոն Քոչարյան

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դավիթ Քոչարյան» ԱՁ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2019 թվականի մայիսի 27-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3 ծածկագրով «Պետության կարիքների համար տպագրական աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Կատարողը պարտավոր էր թիվ-1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 2-րդ չափաբաբաժնով նախատեսված 50000 հատ 494500 ՀՀ դրամի «Թույլտվության հավաստագիր»-ը մինչև 2019 թվականի հունիսի 23-ը պատրաստեր և մատակարարել Պատվիրատուին, սակայն Կատարողը նշված ժամկետում չի կատարել այդ աշխատանքները: Կատարողի կողմից ներկայացրած ձևանմուշը ենթարկվել է փորձաքննության, որը համաձայն ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սույն թվականի հուլիսի 30-ի թիվ 22321901 գրությամբ ներկայացված փորձագետի եզրակացության չի համապատասխանել Պայմանագրի թիվ-1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված տեխնիկական բնութագրին: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2019 թվականի հուլիսի 3-ին թիվ /18-1/35135-2019 գրությամբ սահմանել էր ողջամիտ ժամկետ և նախազգուշացրել էր Կատարողին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները

կատարվեն, այլապես Պայմանագրից բխող պատասխանատվության կիրառումը ընկերության նկատմամբ կլինեն անխուսափելի:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի «ա» և «բ» պարբերությունների պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է միակողմանի մասնակի լուծել 2019 թվականի մայիսի 27-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-3 ծածկագրով ծածկագրով գնման պայմանագիրը՝ 494500 ՀՀ դրամ չկատարված աշխատանքների մասով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի 5.2 և 5.3 կետի համաձայն «Դավիթ Քոչարյան» ԱՁ-ից կգանձվի 2473 ՀՀ դրամ տուգանք, 96423 ՀՀ դրամ տույժ և պայմանագրի ապահովումը 49450 ՀՀ դրամ:

X _____

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.՝ Գ.Ղազարյան
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 060-544-704